ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/86

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «ԲելԷներգոՄաշ» ԲԸ

Մասնակցությամբ՝
«ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» բաց մրցույթ, Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21-01/319»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ /26-1/3003-2022 գրությամբ «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 15.02.2022թ. Ե/40/313-22 գրության հիման վրա, 21.02.2022թ.-ին «ԲելէներգոՄաշ» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.02.2022թ.-ին:

22.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/86 համարի ծածկագիրը:

03.03.2022թ.-ին և 18.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.03.2022թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 15.02.2022թ. Ե/40/313-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակների մատակարարման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԲելէներգոՄաշ» ԲԸ-ի միջև 2021թ. դեկտեմբերի 28-ին կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիր չի կնքվել, քանի որ «ԲելէներգոՄաշ» ԲԸ-ի կողմից, սահմանված ժամկետում, չի ներկայացվել իր

կողմից կնքված համաձայնագիրը՝ փոխարինման ենթակա ապահովումների հետ միասին: Արդյունքում, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի համաձայն, Պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 2022թ. փետրվարի 9-ին միակողմանի լուծվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ /26-1/3003-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 03.03.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«1. «ԲելԷներգոՄաշ» բաժնետիրական ընկերությունը մասնակցել է թիվ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21 ծածկագրով մրցույթին:

2. 28.12.2021թ.-ն <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի և «ԲելԷներգոՄաշ» բաժնետիրական ընկերության միջև կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21-01/319» պայմանագիրը:

3. 04.02.2022թ.-ին «ԲելԷներգոՄաշ» բաժնետիրական ընկերությունը նամակով տեղեկացրել է <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին, որ իր կողմից անկախ հանգամանքներից սահմանված ժամկետում ընկերությունը չի կարող ներկայացնել բանկային երեշխիքները:

4. 08.02.2022թ.-ին <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն կողմից տեղեկագրում հրապարակվել է թիվ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի արտահերթ նիստի

արձանագրություն, որով հանձնաժողովն արձանագրում է, որ պայմանագիրը պետք է լուծվի:

5. 08.02.2022թ.-ին <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն կողմից տեղեկագրում հրապարակվել է թիվ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21 ծածկագրով մրցույթի չկայացած լինելու մասին հայտարարություն (հիմք՝ ՀՀ գնումների մասին օրենքի 37 հոդվածի 4-րդ մաս պայմանագիր չի կնքվում):

6. 09.02.2022թ.-ին հրապարակվել է 28.12.2021թ.-ին թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21 - 01/319» պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարություն:

2. Իրավական դիրքորոշում.

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում եթե ա. խախտել է պայմանագրով նախատեսված ... պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Վերը նշված հոդվածի տառացի մեկնաբանությունից և համակարգային վերլուծությունից հետևում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմնական պայմանը պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումն է, իսկ ածանցյալ պայմանը, կամ որ նույն է հետևանքը պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծելու հանգամանքը:

Նշված իրավական վերլուծության լույսի ներքո դիտարկենք սույն գործի փաստերը և այն համադրենք իրավական հիմքերի հետ.

Այսպես.

04.02.2022թ.-ին «ԲելէներգոՄաշ» բաժնետիրական ընկերությունը նամակով տեղեկացրել է <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ին, որ իր կողմից անկախ հանգամանքներից սահմանված ժամկետում ընկերությունը չի կարող ներկայացնել բանկային երեշխիքները: Այլ կերպ ասած ստացվում է, որ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ի հայտ է եկել դեռևս 04.02.2022թ.ին, իսկ լիազորված մարմնին փաթեթը ուղարկվել է 14.02.2022թ.-ին: Համաձայն ՀՀ կառակարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Տվյալ դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է ժամկետ որոշակիացնելով պատվիրատուի գործողությունները, հակառակ պարագայում կստացվի որ ցանկացած ժամանակ պատվիրատուն կարող է գրավոր կարգով դիմել լիազորված մարմնին ներկայացնելով մասնակցի վերաբերյալ համապատասխան հիմքեր:

Սույն գործով ինչպես արդեն նշեցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ենթակետով նախատեսված հիմքն, այն է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման հիմքը, ի հայտ է եկել հունվարի 4-ին, հետևաբար պարտվիրատուն պարտավոր էր այդ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում «ԲելէներգոՄաշ» ընկերության տվյալներն ուղարկել լիազորված մարմնին համապատասխանաբար օրենքով սահմանված կարգով լուծելով նաև պայմանագրերը:

Այնինչ Պատվիրատուն միայն 14.02.2022 թվականին է դիմել ՀՀ ֆինանսների նախարարին և առաջարկել «ԲելէներգոՄաշ» ընկերության նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Վաղեմության ինստիտուտի կիրառումը, լինելով բողոքի, դիմումի, հայցի, մերժման մասին որոշում կայացնելու առումով բավարար հիմք, իրենից ներկայացնում է լուրջ գործողություն, որը կիրառելի է ցանկացած փուլում:

Նմանատիպ դիքորոշում է հայտնել նաև Գնումների հետ կապված բողոք քննող անձն իր ՍՑ-ԼՕ-2019/233 որոշմամբ և մերժել է ՀՀ ֆինանսների նախարարության «Պոժմաստեր» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը այն հիմնավորմամբ, որ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքն ի հայտ է եկել 18.11.2019թ., երբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է պատվիրատուին, սակայն ՀՀ Պաշտպանության նախարարությունը մասնակցի տվյալները ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկել է 26.11.2019թ.:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու

պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում այպարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՄԻԵԴ-ն իր կողմից կայացված վճռով նշել է, որ ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (տե՛ս, Ստաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93 գանգատով ՄԻԵԴ 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55):

Եվրոպական դատարանը Մինելին ընդդեմ Շվեցարիայի 25.03.1983թ. վճռի 76-րդ կետում նշել է. « ... 6-րդ հոդվածի 1-ին կետում «Դատարան» բառը պարտադիր չէ հասկանալ որպես օրենքի դասական ոճի դատարան՝ միակցված պետության ստանդարտ դատաիրավական ապարատին»:

Այսինքն վերոգրյալից հետևում է, որ սույն գործով կխախտվի «ԲելէներգոՄաշ» ընկերության արդար դատական քննության իրավունքը, եթե ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անտեսի ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ սահմանված ժամկետային սահմանափակումը, եթե չապահովի իրավական որոշակիության երաշխավորումը, մասնակիցների պաշտպանությունը ժամկետանց դիմում-բողոքներից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը:

Համեմատության կարգով ցանկանում եմ նշել, որ նույնիսկ Դատարաններում, եթե հայցը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ, ապա պատասխանողի դիմումի հիման վրա, հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը: /Հիմք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մաս և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 9-րդ մաս/:

Ավելին, նույնիսկ այն դեպքերում, երբ անձը կատարել է իրավախախտում, սակայն 2 ամսվա ընթացքում պատասխանատվության չի ենթարկվել, ապա այլևս չի կարող ենթարկվել/հիմք Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 37- րդ հոդվածի 1-ին մաս/ կամ եթե նույնիսկ վարչական տույժ նշանակելու մասին որոշում է կայացվել, սակայն այն ի կատար չի ածվել կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում, ապա այլևս ենթակա չէ կատարման /հիմք՝ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 302-րդ հոդված/:

Այսինքն, ժամկետային սահմանափակման ինստիտուտը կարևոր է իրավունքի բոլոր ճյուղերում ե ենթակա անվերապահ կիրառման:

Վերոգրյալից հետևում է, որ պատվիրատուն խախտել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջը, ինչն էլ միաժամանակ հաեգեցեում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգի մերժմանը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օյւենսգրքի 367-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի Հանդիպական է ճանաչվում կողմերից մեկի պարտավորության կատարումը, որը պայմանագրին համապատասխան, պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

2. Այն կողմը, որի վրա դրված է հանդիպական կատարումը, պարտավոր կողմի ՝ պայմանագրով պայմանավորված պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու մասին ակնհայտորեն վկայող հանգամանքների առկայության դեպքում, իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի Պարտապանը կետանցող չի համարվում, քանի դեռ պարտավորությունը չի կարող կասւարվել պարտատիրոջ կետանցի հետևանքով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին մասի Պարտատերը կետանցող է համարվում, եթե նա հրաժարվել է պարտապանի առաջարկած

պատշաճ կատարումն ընդունելուց կամ չի կատարել օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված կամ գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից բխող գործողություններ, որոնք չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել իր պարտավորությունը:

Այս փաստերի և իրավական նորմերի վերլուծության հիմքում հայտնում եմ, որ ընկերության կողմից ստանձնած պարտականությունները չկատարելը եղել է այլ հանգամանքների վրա հւսսնելու հետևանքով, որոնցում ընդհանրապես բացակայել է ընկերության մեղքը:

Ավելին.

09.02.2022թ.-ին <<ՀԱԷԿ>>ՓԲ ընկերության կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է տեղեկություն թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21-01/319» պայմանագիրը միակողմանի լուծելու մասին: Այսինքն <<ՀԱԷԿ>>ՓԲ ընկերությունը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 33-րդ կետը համարել է, որ պայմանագիրը լուծված է: Վերոգրյալ գործողությունների վերաբերյալ մենք բազմիցս նշել ենք մեր դիրքորոշումներում, որ պայմնագիրը կարող է լուծվել կամ փոփոխվել բացառապես երկկողմանի համաձայնությամբ կամ դատական կարգով: Հարգելի բողոքներ քննող անձ վեջապես 2021թ. Վճռաբեկ դատարանն իր որշմամբ հաստատեց, որ գնումների շրջանակներում կնքած պայմանագիրը ոչ մի բանով չի տարբերվում այլ հարաբերություններում կնքած պայմանագրերից և ենթարկվում է քաղաքացիական օրենսգրքի նույն կանոններին ինչպես բոլոր պայմանագերը: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԿԴ1/1125/02/17 քաղաքացիակւսն գործով, 2021թ. հուլիսի 27-ին կայացված որոշմամբ կրկին մեջբերելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-3 մասերի պահանջները նշել է «Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի մանկապարտեզների 2017 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով «Դեագա» ՍՊԸ (վաճառող) և Աբովյան համայնքի (գնորդ) մանկապարտեզների միջև կնքվել է թվով 9 սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրեր: Համայնքը միակողմանի լուծել է պայմանագրերը՝ հիմքում դնելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների» ՊՈԱԿ-ի 22.02.2017 թվականի թիվ 465 եզրակացությանը: Դատարանը հայցը բավարարել է այն հիմնավորմամբ՝, որ Համայնքի ղեկավարը միանձնյա, առանց դատարան դիմելու չէր կարող լուծել Ընկերության և Աբովյան համայնքի թվով 9 մանկապարտեզների հետ կնքված պայմանագրերը, քանի որ պայմանագրի լուծումը կամ

փոփոխումը կարող է կատարվել միայն դատական կարգով: Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, հայցը բավարարելով իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար, նույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը»:

Այսինքն, վերոգրյալ դատական ակտերի իրավական դիրքորոշման լույսի ներք դիտարկելով սույն գործի փաստերը, պնդում եմ, որ <<ՀԱԷԿ>> ՓԲ ընկերությունը միանձնյա, առանց դատարան դիմելու չէր կարող լուծել հայցվոր Ընկերության և «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության հետ կնքված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21-01/319» պայմանագիրը, քանի որ պայմանագրի լուծումը կամ փոփոխումը կարող է կատարվել միայն դատական կարգով:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգը և «ԲելէներգոՄաշ» ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը, 07.03.2022թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշման լրացում, հայտնել է հետևյալը.

«Դեռևս 03.03.2022թ.-ն կայացել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/86 գործով առաջին լսումը, որտեղ մեր կողմից մանրամասն ներկայացվել է այն բոլոր իրավական և փաստական հանգամանքները, թե ինչու բողոքներ քննող անձը պետք է մերժի ՀՀ ֆինանսների նախարարության միջնորդությունը և «ԲելէներգոՄաշ» ընկերությանը չներառի գնումների մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այս լրացմամբ ներկայացվում է թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 գործով Ձեր կողմից նույնանման հանգամանքներում կայացրած որոշման վերլուծական մասը (ընդգծված), ինչպես նաև ևս մեկ փաստարկ այն մասին, որ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ի կողմից խախտվել է օրենքով սահմանված 5 աշխատանքային օրվա ժամկետը:

Այսպես.

Դեռևս 13.01.2022թ.-ն <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն էլեկտրոնային եղանակով ծանուցել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21-01/319» պայմանագրի կողմ հանդիսացող «ԲելէներգոՄաշ»

բաժնետիրական ընկերությանը այն մասին, որ ֆինանսական միջոցներն առկա են և ընկերությունը օրենքով սահմանված 15 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ներկայացնել համաձայնագիրը կնքված և ստորագրված, ինչպես նաև որակավորման, պայմանագրի և կանխավճարի ապահովումները:

Հարգելի բողոքներ քննող անձ, պարզ հաշվարկը ցույց է տալիս, որ 13.01.2022թ.- ին (<<ՀԱԷԿ>>ՓԲԸ-ի կողմից ծանուցման ամսաթիվն է) հաջորդող օրվանից հաշվարկած 15 աշխատանքային օրն ավարտվում է 03.02.2022թ.-ին, որին հաջորդած 5 աշխատանքային օրն ավարտվում է 10.02.2022թ.-ին: Հիշեցման կարգով հայտնեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարություն թղթերն ուղարկվել է 14.02.2022թ.-ին:»:

4. <u>ՍՑ-LO-2022/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով 23.07.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.11.2021թ.-ի նիստի թիվ 14 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ն:

v. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ի միջև 28.12.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21-01/319» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

vi. Հանձնաժողովի քարտուղարի՝ ani.akhoyan@maanpp.am էլ. հասցեից 13.01.2022թ.-ին Մասնակցի էլ. հասցեին է ուղարկվել համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու մասին ծանուցում:

vii. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

viii. www.procurement.am (www.gnumner.am) համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 09.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/40/273-22 ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը և հաշվի առնելով, որ համաձայնագիր չի կնքվել, միակողմանի լուծել է կողմերի միջև 28.12.2021թ.-ին կնքված պայմանագիրը:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ /26-1/3003-2022 գրությամբ «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության

անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա¬րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ռեակտորային բաժանմունքի պատասխանատու սպառիչների հովացման համակարգերի (ՊՍՀՀ) I և II անցուղիների համար խողովակաշարերի և փականների ձեռքբերման նպատակով 23.07.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21» ծածկագրով բաց մրցույթին, որը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով, մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ի և Պատվիրատուի միջև 28.12.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-16/21-01/319» ծածկագրով պետական գնման պայմանագիրը:

Պայմանագրի 8.13 կետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից

տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Հանձնաժողովի քարտուղարի՝ ani.akhoyan@maanpp.am էլ. հասցեից 13.01.2022թ.-ին Մասնակցի էլ. հասցեին է ուղարկվել համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու մասին ծանուցում:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

www.procurement.am (www.gnumner.am) համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 09.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/40/273-22 ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը և հաշվի առնելով, որ համաձայնագիր չի կնքվել, միակողմանի լուծել է կողմերի միջև 28.12.2021թ.-ին կնքված պայմանագիրը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Անդրադառնալով Մասնակցի կողմից նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացված գրավոր դիրքորոշմանն ու դրանում առկա հակափաստարկներին՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ դրանք անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԿԴ1/1125/02/17 և ԵԿԴ/1769/02/14 քաղաքացիական գործերով կայացված որոշումներով չի փաստում ու մեկնաբանում, որ *պայմանագրի լուծումը կամ փոփոխումը կարող է կատարվել միայն դատական կարգով:* Նման մեկնաբանություն, ինչպես պարզ է դառնում թիվ ԿԴ1/1125/02/17 քաղաքացիական գործի ուսումնասիրության արդյունքում, արվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ վճռով, որի մասին ակնարկ է կատարվում ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման նկարագրական մասում՝ առանց դրա վերաբերյալ որևէ մեկնաբանություն կամ դատողություն անելու: Ավելին, թիվ ԵԿԴ/1769/02/14 քաղաքացիական գործերով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել, որ *«... **պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել ոչ միայն կողմերի համաձայնությամբ, այլև՝ մեկ կողմի պահանջով դատարանի վճռով** ...»:*

Ինչ վերաբերում է առարկություններում նեկայացված հաջորդ հիմքին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքերն ի հայտ են ոչ թե 04.02.2022թ.-ին, երբ «ԲելէներգոՄաշ» ԲԸ-ն նամակով տեղեկացրել է Պատվիրատուին, որ իր կողմից անկախ հանգամանքներից սահմանված ժամկետում ընկերությունը չի կարող ներկայացնել բանկային երեշխիքները, այլ www.procurement.am (www.gnumner.am) համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 09.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/40/273-22 ծանուցմամբ կողմերի միջև 28.12.2021թ.-ին կնքված պայմանագիրը միակողմանի լուծելով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքերը, այն է՝ *«խախտել է պայմանագրով նախատեսված ... պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը»*, կարող է ի հայտ գալ նշված դրույթում առկա միաժամանակյա վավերապայմանների առկայության դեպքում: Պետք է արձանագրվի պայմանագրով սահմանված պարտավորության խախտում, որն էլ հանգեցնի պայմանագրի միակողմանի լուծմանը: Այսպես՝ առանց վերը նշված հանգամանքների երևան գալու՝ բացառվում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքերի առկայության փաստարկումը:

Սույն դեպքում՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 8.9 կետի դրույթները, www.procurement.am (www.gnumner.am) կայքում 09.02.2022թ.-ին

հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/40/273-22 ծանուցմամբ, լուծել է կողմերի միջև 28.12.2021թ.-ին կնքված պայմանագիրը:

Ընդ որում՝ հարկ է նկատել, որ Պայմանագրի համանուն կետով սահմանվել է, որ Մասնակիցը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, **համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից**:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքերը *(պայմանագրի միակողմանի լուծման մասով)* ի հայտ են գալիս Պայմանագրի 8.9 կետով նախատեսված գործողություններ կատարելու հիմքով: Ուստի, սույն դեպքում, Պատվիրատուի կողմից թույլ չի տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2022թ.-ի թիվ /26-1/3003-2022 գրությամբ «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/86 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «ԲելԷներգոՄաշ» ԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**